ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 130-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հարգելի բարեկամներ,

Անչափ ուրախ եմ Հայաստանի Հանրապետության կառավարության և անձամբ իմ անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը, Էջմիածնի Գևորգյան Ճեմարանի դասախոսական կազմին, բոլոր աշխատողներին և ներկա ու նախկին սաներին հաստատության 130-ամյա հոբելյանի կապակցությամբ շնորհավորանքի և գնահատանքի ակնածալից խոսք հղելու պատեհության համար:

Գևորգյան Ճեմարանը մեր ժողովրդի եզակի կրթամշակութային օջախներից է, որը Սուրբ Էջմիածնի հովանու ներքո դասնամյակների իր բեղուն գործունեությամբ, ըստ ամենայնի, վաստակել է հայոց ազգային արժեքների շարքը դասվելու պատիվն ու իրավունքը: Հայոց մեծերի բազում սերունդներ իրենց մկրտությունն ստանալով սրբություն սրբոց այս կրթօջախում՝ նվիրումով ու փքնանքով են ծառայել մեր դպրությանն ու մշակույթին:

Հայ իրականության մեջ ճեմարանի բացառիկ դերի գիտակցումով էլ Հայաստանի Հանրապետության կառավարությունն այս կրթօջախին շնորհեց բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ՝ դրանով իսկ արձանագրելով ճեմարանի նախընթաց վաստակը՝ ակնկալելով, որ այն առավել հաջողությամբ կշարունակի իր ազգանվեր գործունեությունը:

Վերստին շնորհավորում եմ պատկառելի հոբելյանի կապակցությամբ, մաղթում քաջառողջություն, ձեր առաքելությանն այսուհետ ևս անխոտոր ծառայելու կորով:

Երևան,
6 նոյեմբերի 2004 թ.